

ԻՐԱՆ ՊԻՏԻ ՉՄԱՍՆԱԿՑԻ ԿԻՐԱԿԻ ՕՐ ՄԱՍԶԱԹԻ ՄԵՁ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱԳԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՏ ԲԱՆԱԿԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Իրանի պետական պատկերասփիւռի կայանը Իրանի տարբեր շրջաններուն վրայ իւրայեւեան օդային յարձակումներէն ետք յայտարարեց. «Իրան պիտի չմասնակցի կիրակի օր Օմանի մայրաքաղաքին մէջ Նախատեսուած Միացեալ Նահանգներու հետ անուղղակի հիւլեական բանակցութիւններուն»:

Նախքան այդ, ԱՖՓ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ ամերիկացի պաշտօնատար մը յայտնած է, թէ Միացեալ Նահանգներ տակաւին կը յուսան կիրակի օր Մասքաթի մէջ Իրանի հետ անոր հիւլեական թղթածրարին շուրջ բանակցութիւններ կատարել:

«Տակաւին մտադիր ենք կիրակի օր բանակցութիւններ կատարել», նշած է պաշտօնատարը:

ԻՐԱՆԵԼԵԱՆ ԼԱՅՆԱԾԱԽԱԼ ՕԴԱՅԻՆ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱՆԻ ՎՐԱՅ

Իւրայեւեան օդուժը ուրբաթ արշալոյսին լայնածիր յարձակումներ գործեց Իրանի վրայ՝ հարուածելով մայրաքաղաք Թեհրանի եւ շարք մը այլ քաղաքներու մէջ, ներառեալ Նաթանզ եւ Թաւրիզ շարք մը դիրքեր:

Իւրայեւեան բանակի բանքեր Իլի Տաւրին յայտարարեց, որ իւրայեւեան օդուժը գիշերուան ընթացքին աւելի քան 100 թիրախներ հարուածած է, եւ գործողութեան մասնակցած են 200 ռմբածիգներ: Իւրայեւեան յարձակումները երէկ օրուան ընթացքին եւս շարունակուեցան: «Նիւ Եորք Թայմզ» օրաթերթին տուեալներով՝ իւրայեւեան ուժերը յարձակած են Թեհրանի շրջանին մէջ գտնուող վեց ռազմակայաններու վրայ:

Իւրայեւ իր յարձակումին ընթացքին հարուածեց Ֆորտուի, Խանտապի, Նաթանզի, Իսֆահանի եւ Պուշահիրի մէջ գտնուող հիւլեական կայանները, ինչպէս նաեւ Թեհրանի մէջ Իրանի Յեղափոխական պահակազուկի կեդրոնատեղին, ուր սպանըւեցաւ պահակազուկի իրամանատար հազարապետ-գորավար Յիւսէյն Սալամին, Թեհրանի մօտ ռազմակայաններ, ներառեալ Յեղափոխական պահակազուկի ռազմակայանները, «Շարիաթ Շահիտ Մահալլաթ» համալիրը, որ կը գտնուի Թեհրանէն հիւսիս-արեւելք, եւ ուր կը բնակին Յեղափոխական պահակազուկի բարձրաստիճան իրամանատարները: Այնտեղ 3 բնակուած շէնքեր քանդուեցան:

Իւրայեւ նաեւ հարուածեց գինեալ ուժերու իրամանատարութեան կեդրոնը, ուր սպաննուեցաւ կեդրոնի իրամանատար հազարապետ-գորավար Դուլամ Ալի Ռաշիտ:

Իւրայեւ հարուածեց ակնաւոր հիւլեական գիտնականներու բնակարանները, ուր Սոհամետ Մահտի Թահրանիի եւ Ֆարիտուն Ազափի նման գիտնականներ սպաննուեցան:

Իւրայեւեան օդուժը թիրախաւորեց իրանեան հեռահաս հրթիռներու ծրագիրին առնչուած կառոյցներ, ինչպէս նաեւ հակաօդային պաշտպանութեան համակարգերն ու հրթիռներու պահեստանոցները, Թեհրանի մէջ Իմամ Խոմէյնիի օդակայանը, Թաւրիզի գտարանին շրջապա-



տը, Թեհրանի հիւսիսային Նոպիսատ շրջանին մէջ շէնքեր, ուր քաղաքայիններու շարքերուն մէջ արծանագրուեցան զոհեր ու վիրաւորներ:

Իւրայեւեան յարձակումներուն պատճառով նաեւ սպաննուեցաւ իրանեան բանակի սպայակոյտի պետ Սոհամետ Պաղերի: Իրանի գերագոյն հոգեւոր պետի խորհրդական Ալի Շամխանին վիրաւորուեցաւ:

2 աղբիւրներ «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան յայտնեցին, թէ իւրայեւեան յարձակումին ընթացքին առնուազն 20 իրանցի բարձրաստիճան ղեկավարներ սպաննուած են: Իւրայեւեան պատկերասփիւռի 14-րդ կայանը հաղորդեց. «Իւրայեւի մէջ պատկերացումը այն է, որ Իրանի ղեմ արշաւը շաբաթներով եւ տարբեր ուժգնութեամբ պիտի շարունակուի»:

Իւրայեւի պետական ծայնասփիւռի կայանը հաղորդեց. «Մոսաւտը Իրանի մէջ ստեղծեց անօդաչու թռչող սարքերու ռազմակայան մը, որ այսօրուան յարձակումի ընթացքին օգտագործուեցաւ»:

Իրան հակադարձեց Իւրայեւի վրայ 800 անօդաչու թռչող սարքեր եւ թեւաւոր հրթիռներ արձակելով, սակայն անոնք Իւրայեւի սահմաններէն դուրս, դրացի երկրներէն վերէն վնասագերծուեցան իւրայեւեան օդուժին կողմէ: Այդ աշխատանքին մասնակցեցաւ նաեւ յորդանանեան բանակը, որուն մէկ պատասխանատուն յորդանանեան «Փեթրա» լրատու գործակալութեան յայտնեց, որ իրանեան հրթիռներու եւ անօդաչու թռչող սարքերու վնասագերծման «գործողութիւնը կատարուած է հիմնըւելով ռազմական գնահատականներու վրայ, թէ հրթիռներն

Շար.ը՝ էջ 8

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՐԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՁ ՀԻՄՆԱՐԿԷՔԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱՒ «ՊԷՁԻՔԵԱՆ» ԿԵԳՐՈՆԻՆ



Անթիլիսի մայրավանքին մէջ, անցնող օրերուն, 10-13 յունիս 2025-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային կեդրոնական վարչութեան Կոնսական ու Զաղաքական ժողովներու կայացած նիստերու շրջագիծին մէջ, երէկ՝ ուրբաթ, 13 յունիսին, Արամ Ա. վեհափառ հայրապետի նախագահութեամբ ու օրինութեամբ կատարուեցաւ հիմնարկէն «ՊԷՁԻՔԵԱՆ» կեդրոնին: Արարողութեան ներկայ էին յիշեալ կեդրոնի բարերար ընտանիքի անդամներ Ալեքքո Պեգիբեան, իր գաւազն՝ Չարէն եւ թոռը՝ Անի Պեգիբեաններ, ինչպէս նաեւ Կրօնական ու Զաղաքական ժողովներու անդամները, թեմակալ առաջնորդները եւ թեմերու ազգային վարչութեանց ներկայացուցիչները:

Այս առիթով արտասանած հայրապետական իր օրինութեան խօսքին մէջ վեհափառ հայրապետը յիշեց, որ Պեգիբեան ընտանիքը՝ Ալեքքոն ու իր տիկինը՝ Անին, կիլիկեան Սուրբ աթոռին մեծագոյն բարերարներէն եղած են, եւ այսօր անոնց գաւազն՝ Չարէնը, Սոյն ոգիով կը շարունակէ՝ հետեւելով իր ծնողքին օրինակին: Յանգուցեալ Անին մայրուն ներկայութիւն եւ միջի ուժ եղած

Շար.ը՝ էջ 8

ԻՐԱՆԻ ՎՐԱՅ ԻՐԱՆԵԼԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

Իրանի վրայ իւրայեւեան յարձակումին յաջորդեցին միջազգային արձագանգներ, որոնք դատապարտում եւ զգուշացման ու ինքնազսպումի կոչեր կը պարունակէին: Շարք մը պետութիւններ դատապարտեցին յարձակումը եւ զայն նկատեցին Իրանի գերիշխանութեան ոտնահարում:

Շրջանային ու միջազգային կարգ մը կողմեր իրենց մտահոգութիւնը յայտնեցին սրընթաց մագլցումին եւ շրջանին մէջ տագնապի տարածքի ընդլայնման նկատմամբ:

Ուժանիւթի միջազգային գործակալութիւնը յայտնեց. «Իրանեան հիւլեական անվտանգութեան իշխանութիւններուն հետ կապ կը հաստատուեց հիւլեական կայաններու վիճակը ստուգելու համար» շեշտելով. «Մտահոգ ենք, եւ որեւէ պարունակի մէջ պետք չէ իրանեան հիւլեական կառոյցներուն վրայ յարձակում գործել»:

Լեական կառոյցներուն վրայ յարձակում գործել»:

«Իրանի վրայ յարձակումը վտանգաւոր հետեւանքներ ունի հիւլեական ապահովութեան եւ շրջանային անվտանգութեան վրայ», նշեց գործակալութիւնը՝ բոլոր կողմերուն կոչ ուղղելով «առաւելագոյն ինքնազսպում ցուցաբերելու»:

«Չինուորական որեւէ արարք, որ հիւլեական կայաններուն ապահովութիւնն ու անվտանգութիւնը կը վտանգէ, Իրանի ժողովուրդին ու շրջանին համար ծանր հետեւանքներ կը պարունակէ», ընդգծեց Յիւլեական ուժանիւթի միջազգային գործակալութիւնը՝ աւելցնելով. «Կը շարունակենք մօտէն հետեւիլ կացութեան եւ ամբողջովին պատրաստ ենք թեքնիք

Շար.ը՝ էջ 8

ԻՐԱՆԻ ՎՐԱՅ ԻՐԱՆԵԼԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵՅՈՒՄԾՔՆԵՐ

Հանրապետութեան նախագահ ժողգէ Լուս յայտնեց. «Այսօր արշալոյսին Իրանի իսլամական հանրապետութեան վրայ իւրայեւեան յարձակումները միայն իրանցի ժողովուրդը չթիրախաւորեցին, այլ նաեւ բոլոր միջազգային շանքերը, որոնք կը թափուին Միջին Արեւելքի շրջանին ու մերձակալ պետութիւններուն մէջ կայունութեան պահպանման եւ այդտեղ մագլցումէն խուսափելու համար»:

«Այսպիսի յարձակումներուն նպատակը ականահարելն է կացութեան վատթարացումը կանխարգիլելու հա-



մար ներկայիս գոյութիւն ունեցող բոլոր նախաձեռնութիւններն ու միջնորդութիւնները, որոնք շրջանի երկիրներէն ու անոնց ժողովուրդներէն պատերազմի վտանգը

Շար.ը՝ էջ 8

ԱԿՆԱՐԿ

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԳՐԱՆՔԸ

Միացեալ Նահանգներ-Իրան հիւլեական թղթածրարի հարցով բանակցութիւններու 6-րդ փուլի սեմին, Իւրայեւ իրթիռակոծեց իրանեան տարածքներ եւ թիրախաւորեց գիտութեան եւ գիտական մարդուժի բարձրագոյն ղեմքեր:

Ուաշինկթըն-Թեհրան բանակցութիւններէն եւ ենթադրեալ արդիւնաւորումէն անհանգիստ էր Թեյ Անի: Մինչ վերիվայրումներու կ'ենթարկուէին բանակցող կողմերէն հնչած յայտարարութիւնները, մերթ լաւատեսական լիցք հաղորդելով գործընթացին, մերթ իրար մեղադրելով բանակցութիւններու հաւանական ձախողման:

Միացեալ Նահանգներու նախագահին յայտարարութիւնը որոշ առումով լոյս կը սփռէ պատահարներուն վրայ: Ուրեմն: Միացեալ Նահանգներու նախագահը զգուշացուցած է, որ հետեւանքները շատ աւելի ծանր կ'ըլլան, քան կը պատկերացուի: Բայց դեռ ժամանակ կայ՝ կանխելու այս կոտորածը, որովհետեւ յաջորդ՝ աւելի դժուար յարձակումները արդէն ծրագրուած են: Իրանը պետք է համաձայնագիր կնքէ, որպէսզի փրկէ այն, ինչ որ ժամանակին յայտնի էր իբրեւ Իրանական կայսրութիւն:

Այս բոլորը կը նշանակեն, որ Իրանը պետք է համաձայնի Միացեալ Նահանգներու կանոններով ընթացող բանակցութեան եւ իր ստորագրութիւնը դնէ ամերիկեան խմբագրումով ձեւակերպուած փաստաթուղթին տակ:

Այս բոլորէն օր մը առաջ Նոյն նախագահը ըսած էր, թէ կ'ուզէ համաձայնագիր կնքել Իրանի հետ: Թե՛ կողմերը շատ մօտ են համաձայնագրիին, եւ պիտի չուզէր, որ Իւրայեւը միջամտէ եւ խանգարէ գործընթացը:

Հիմա արձանագրենք նաեւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարին յայտարարածը առ այն, որ իր կառավարութիւնը տեղեակ եղած է սպասուած գործողութիւններուն մասին, բայց ներգրաւուած չէ այս գործընթացին:

Պարզացնենք ըսուածները: Ուաշինկթըն Իրանի հետ համաձայնելու սեմին է, բայց մտահոգ է, որ Իւրայեւ կրնայ միջամտել եւ խանգարել, թեւ տեղեակ եղած է նախապես սանձազերծուած գործողութիւններուն մասին:

Դժուար է պատկերացնելը, որ Իւրայեւ առանց Միացեալ Նահանգներու համաձայնութեան յարձակում գործած է Իրանի վրայ: Պաշտօնական յայտարարութիւններուն համաձայն սակայն, Ուաշինկթըն տեղեակ պահուած է, առնչութիւն չէ ունեցած, Նոյնիսկ համաձայն ալ պետք չէ եղած ըլլայ, այդուհանդերձ Իւրայեւ յարձակած է:

Այս հանգամանքները կը պարզեն հետեւեալ կացութիւնը: Իրանի արտադարձքային յեղակները հարուածելէ ետք (Լիբանան, Սուրիա, Կազա, Իրաք եւ Եմեն), Իւրայեւ համեմատաբար ծաւալուն-թիրախային յարձակում կը գործէ Իրանի վրայ: Ռազմական այս գործընթացին զուգահեռ կ'ընթանայ բանակցային գործընթաց:

Յարձակումը կանոններու պարտադրանք է. հիւլեականի օրակարգով ընդհանրապէս Իրանը թոյլ պետութեան վերածելու առաջադրանքն է, որ փուլ առ փուլ կ'իրականացուի տարածաշրջանին մէջ:

«Ա.»

«ԱԶԳԱԿ»-Ի ԱՅՍՕՐՈՒՄԱՆ ԹԻԻԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ Է
ՆԱԶԱՐԷԹ ՍԱՊՈՒՆԴԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԼԵՒՈՆ ԺԴ. ՊԱՊԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱԳԱՅ ԱՌՈՒՆԸ



Երեկ Վատիկանի մէջ Լեւոն ԺԴ. պապը ընդունեց Նախագահ Ժողով Առնը, առաջին տիկին Նեմաթ Առնը եւ ընտանիքին անդամները:

Հանրապետութեան Նախագահը Լեւոն ԺԴ. պապին յանձնեց Լիբանան այցելութեան հրաւեր մը: Այս առիթով Նախագահ Առն ըսաւ. «Լիբանանցիները մեծ կարօտով կը սպասեն ձեր այցելութեան, որովհետեւ ձեր օրհնաբեր ներկայութիւնը պիտի ըլլայ խաղաղութեան եւ յոյսի պատգամ»:

Նախագահ Առն աւելի ուշ հանդիպում ունեցաւ Նաեւ Վատիկանի պետական քարտուղար կարտի-նալ Փիեթրօ Փարոլինի հետ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԴ ԼՈՒՐԵՐ



●ԻՍՐԱՅԷԼԵԱՆ օդուժը հինգշաբթի ուշ գիշերին երկու իրերայաշորդ յարձակումներ գործեց Ռիհան Չըրրին շրջակայ վրայ: Իսրայէլեան օդուժը Նաեւ երկու իրերայաշորդ յարձակումներ գործեց Պալատի եւ Թֆաիթ գիւղերուն միջեւ գտնուող Թըպա շրջակային վրայ:

Իսրայէլեան բանակը հաղորդեց, որ իսրայէլեան օդուժը հարաւային Լիբանանի շարք մը շրջաններու մէջ յարձակում գործեց Յըզպալլայի պատկանող թիրախներու վրայ:

●ԱՐԲԻՐՆԵՐ «Անպա» օրաթերթին յայտնած են. «Հարաւային Լիբանանի մէջ միջազգային ուժերուն նկատմամբ ունեցուող թրջածրարը փակեցաւ այդ ուժերուն աջակցելու եւ անոր դերակատարութեան կանչելու նկատմամբ պետական միաձայնութեան ու լիբանանեան քաղաքականութեան, ինչպէս Նաեւ բանակի հրամանատարի Նաքուրա այցելութեան եւ ամբողջական աջակցութեան ընդգրծման շնորհիւ»:

●«ԱՆՊԱՐ» օրաթերթը կը գրէ. «Կեդրոնական դրամատան մէջ թափուր մնացած պաշտօններու նշանակման հարցով իշխանութեան երեք պետերուն եւ Կեդրոնական դրամատան առնչակից կողմերուն միջեւ հաղորդակցութիւնները կը շարունակուին»:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԵՅԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ
30-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Կիրակի, 15 յունիս 2025-ի առաւօտեան ժամը 9:30-ին, մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ պիտի մատուցուի եպիսկոպոսական սուրբ եւ անմահ պատարագ եւ հայրապետին գահակալութեան 30-ամեակին առիթով պիտի կատարուի **ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ**:

Նախագահութեամբ՝

**ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա.
ՎԵՀԱՓԱՌ-ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Պատարագիչ եւ քարոզիչ՝

**ԳԵՐԸ. Տ. ՇԱՀԱՆ ԱՐԸ.
ՍԱՐԳԻՍԵԱՆ**

«Կիլիկիա» մատենադարանի տեսուչ

Սուրբ պատարագէն ետք վեհափառ հայրապետը վեհարանի դահլիճին մէջ պիտի ընդունի շնորհաւորութիւններ:

ԴԻՄԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՆԱԶԱՐԵԹ ՍԱՊՈՒՆԾԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի կիրակի, 15 յունիս 2025-ին, Անթիլիասի Ա. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՔԱՍԵՍ. «ԿԸ 20ՐԱԿՅԻՆՔ ԹԵՐԱՆԻՆ՝ ԱՆՈՐ ԻՐԱՎՈՒՆԸՆԵՐՈՒՆ, ԿԵՑՈՒԱԾԸՆԵՐՈՒՆ, ՈՐԴԵԳՐԱԾ ՔԱՅԼԵՐՈՒՆ, ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԵՐՈՒՆ ԵՒ ԸՆՏՐԱՆՔՆԵՐՈՒՆ ՄԵՋ»

Հըզպալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Նա-յիմ Զասսմ դատապարտեց Իրանի վրայ իսրայէլեան յարձակումը՝ նշելով, որ անկէկան անարդարանալի է եւ միայն կը ծառայէ լռեցնելու Կազայի մէջ պաղեստինցի ժողովուրդին, Լիբանանի եւ շրջակային մէջ դիմադրութեան զօրակցող ու թիկունք կանգնող ծայրը:

«Այս յարձակումը շրջանի կայունութեան վրայ մեծ ազդեցութիւն պիտի ձգէ եւ անպատիժ պիտի չմնայ, որովհետեւ Իրանի իսլամական հանրապետութիւնը ազատներուն ջախջ, արժանապատուութիւնն ու հպարտանքն է», ըսաւ ան:

«Իսրայէլացի թշնամին եւ անոր հետ Ամերիկան պիտի չկարենան ազդել Իրանի իսլամական հանրապետութեան ընտրանքներուն վրայ: Անոր դերակատարութիւնն ու դիրքը պիտի չազդուին, այլ՝ ան աւելի հպարտ եւ տոկոսն պիտի դառնայ, իսկ սիոնական գոյացութիւնը իր բարբարոսութեան ու վայրագութեան համար պիտի զոյջայ», յայտնեց շէյխ Զասսմ:

«Հըզպալլան, իսլամական դիմադրութիւնն ու պայքարող մեր ժողովուրդը կառնած կը մնան մեր երթին ու դիմադրութեան, եւ կը զօրակցին թեհրանին՝ անոր իրաւունքներուն, կեց-



ածքներուն, որդեգրած քայլերուն, ինքնապաշտպանութեան քայլերուն ու ընտրանքներուն մէջ», յայտարարեց ան՝ աւելցնելով. «Իսրայէլացի ոճրագործ թշնամին եւ անոր բռնատիրական հովանաւոր Ամերիկան միայն վարկաբեկում, ամօթ եւ պարտութիւն պիտի կրեն»:

Հըզպալլան հաղորդագրութիւն մը հրապարակելով շեշտեց. «Այս յարձակումը տեղի պիտի չունենար առանց Ամերիկեան ուղղակի համաձայնութեան, համակարգումի եւ ծածկոյթի, զորս Ուաշինկթըն կը փորձէ հերքել՝ քաջ գիտակցելով իր վրայ ունեցած հետեւանքներուն»: Կուսակցութիւնը նշեց. «Այս յարձակումները Իրանը պիտի չտկարացնեն»:

Հըզպալլայէն պաշտօնատար մը «Ռոյթըրզ»-ին յայտնեց. «Կուսակցութիւնը Իրանը հարուածելուն պատասխանելով Իսրայէլի վրայ յարձակում գործելու պիտի չնախաձեռնէ»:

ԼԸ ՏՐԻԱՆ. «ՖԻՆԻԼ-Ի ԴԵՐԸ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ ԱՌՆԵԼ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ ԹԻՒ 1701 ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ ԱՌՆԵԼ»

Ֆրանսայի Նախագահի յատուկ պատուիրակ ժան Իւ Լը Տրիան «Էլ.Պի.Սի.» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին յայտնեց. «Պետք է զինադադարի բոլոր կէտերը յարգել եւ կէտերի կոչել գոյութիւն ունեցող հսկողութեան **մեքսիկա-մը**՝ սպառնալիքներէ կանխազգուշացման եւ առանց մագլցումի որեւէ վտանգի նկատմամբ գործելու համար»:

Լը Տրիան նշեց. «Այն ինչ որ ամենէն շատ ուշադրութիւնս գրաւեց այն է, որ այսուհետեւ լիբանանեան պետութիւնը գոյութիւն ունի եւ անկէկան կը գործէ, սակայն տակաւին ոչ իր ամբողջ ներուժով, եւ սառեցման ու անստանկութեան տարիներէ ետք կայունութեան մէկ ձեւը վերականգնելը, եւ ասիկա մեծ ուժ է»:

«Միախմբուած, ներդաշնակ եւ միասնական կառավարութիւն կը տեսնեմ, եւ Լիբանանի մէջ երկար ատենէ ի վեր ատիկա չեմ տեսած: Կան բարձր մակարդակի անձնաւորութիւններ, որոնք **թեքնիք** բարձր ատակութիւն ունին եւ մտադիր են լիբանանցի ժողովուրդին կողմէ իրենց տրամադրուած վստահութեան բարձրութեան վրայ ըլլալ, ինչ որ այսօր չափազանց կարեւոր է»:

«Մենք այսօր առողջացանք ուղիի վրայ ենք, ուստի կարեւոր է վստահութեան կառուցումը շարունակել, եւ կառավարական իշխանութիւնները պետք է շարունակեն խորքային բարեկարգումներու համար իրենց ջանքերը, որովհետեւ Լիբանանը պետք է գիտակցի, թէ եթէ բարեկարգումի չենթարկուի, մէկ քայլ ետ պիտի ըլլայ», աւելցուց ան:

«Միջազգային մտահոգութիւնը Լիբանանի մէջ պատերազմի նկատմամբ է, եւ հակազդեցութիւնը այդ ուղղութեան ուղղութեամբ արագօրէն գործելն է,



որովհետեւ այն, ինչ որ Սուրիոյ մէջ տեղի ունեցաւ, կրնայ Նաեւ Լիբանանի համար առիթ ըլլալ», շեշտեց Ֆրանսացի պատուիրակը:

«Լիբանանը այսօր առիթ ունի իր տեղը հաստատելու՝ իբրեւ Միջին Արեւելքի մէջ ինքզինք վերանորոգող երկիր, եւ Փարիզի խորհուրդաժողովը վերադասաւորման աջակցութեան ճամբով ատոր կը ձգտի, պայմանով որ Նախաձեռնութեամբ ու լիբանանցի ղեկավարներու զօրակցութեամբ սկսի», ըսաւ Լը Տրիան:

«Չենք պետք է բացառապէս պետութեան մենաշնորհը ըլլալ, եւ այս սկզբունքին գործադրութիւնը պետական իշխանութիւններու ուսերուն վրայ է: Ես ամբողջական կերպով կը զօրակցիմ Նախագահ Առնի գործելակերպին, որովհետեւ ան վճռակամութիւնն ու զգուշութիւնը կը միատեղէ, եւ ատիկա պետք է հանրապետութեան Նախագահի



ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ՝
ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

**ԴՊՐԵՎԱՆՔԻ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍ
ԵՒ
ՎԿԱՅԱԿԱՆԱՅ ԲԱՇԽՈՒՄ**

95-րդ Ուսումնակրթական Տարեշրջանի

Տեղի կ'ունենայ կիրակի, 15 յունիս 2025, երեկոյեան ժամը 7:00-ին, Ս. Աստուածածին վանքին մէջ, Պիքֆայա:

ՀՐԱԵՐ

Միջուկի Պոտագեան Փնտ

Հովանաւորութեամբ
ԳԵՐԸ. Տ. ՇԱՀԱՆ ԱՐԸ. ՓԱՆՈՍԵԱՆԻ
Առաջնորդ Լիբանանի Հայոց

«Ազգակ»-ի մատենաշար թիւ 1

ՇՆՈՐՀԱՇԱՆՂԵՍ

Հեղինակ **ՅԱՐՈՒԹ ԳԵՔԻՃԵԱՆ**

Հատորը կը ներկայացնէ
ՍԵՂԱ ԽՏԵՇԵԱՆ


Որոշոյի խօսք
ԿԱՐՈ ՅՈՎԱՆՆԵՍԵԱՆ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 20 Յունիս 2025-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, «Ազգակ»-ի «Փնտիկ» սրահին մէջ

«ՀՈՎԱՆՈՑ ԾԱՌԵՐ» ՍՈՔՈԹՐԱ ԿՂԶԻՆ ՎՐԱՅ

Հնդկաց ովկիանոսին մեջ գտնուող Սոքոթրա կղզին Եմենի գլխավոր կղզին է: Ան ունի 130 քմ երկարություն եւ մօտաւորապէս 40 քմ լայնք: Ան մօտ է Նաեւ Սոմալիին, որ կը գտնուի 230 քմ հեռու: Կղզին շրջապատուած է ճերմակ աւազով ծովափներով եւ ամբողջապէս կապոյտ ջուրերով: Ան ունի տաք կլիմայ մը եւ անապատային կամ ժայռոտ տեսարաններ: Սոքոթրայի վրայ ապաստան գտած են տեսակաւոր վայրի անասուններ, ինչպէս՝ մողեսներ, խիուսէներ, թռչուններ..., եւ հոն կը բուսին աւելի քան 800 տեսակի բոյսեր: Այդ բոյսերուն մէջ 3 բոյսերէն մէկը այդ կղզիին յատուկ է, եւ անոնցմէ ամենէն ծանօթը Սոքոթրայի վիշապածառն է:

Սոքոթրայի վիշապածառը դանդաղօրէն կ'աճի կղզիին բլուրներուն եւ ժայռոտ շրջաններուն մէջ: Անոր տերեւները դէպի երկինք դարձած են: Իր արտասովոր կերպարանքին պատճառով ան յաճախ ճանչ-



այծերը կ'ուտեն փոքրիկ թուփերն ու ծառերը՝ առանց անոնց ժամանակ տալու, որ աճին:

Սոքոթրայի բնակիչները կը փորձեն պահպանել այս ծառերը, որպէսզի կղզին չկորսնցնէ իր այս հարստութիւնը: Օրինակի համար, անոնք Նոր տունկեր կ'աճեցնեն տնկարաններու մէջ: Այս գոց եւ պահպանուած վայրերուն մէջ այծերը չեն կրնար մտնել, եւ տարբեր տեսակի բոյսերը կը պատրաստուին տոկալու համար կլիմայի փոփոխութեան դէմ: Իրենց այս աշխատանքներուն համար կղզիին բնակչութիւնը կը փափաքի օգնութիւն ստանալ Եմենի պետական պատասխանատուներէն: Սակայն, դժբախտաբար, այժմ անոնք աւելի մտահոգ են տիրող քաղաքական կացութեամբ եւ պատերազմով, քան՝ բնութեան պահպանումով...

**

- Հետաքրքրական: Գիտէի՞ր, թէ Սոքոթրայի բնակիչները, որոնց թիւը կը հասնի 42 հազարի, կը խօսին սոքոթրի լեզուն: Ասիկա լեզու մըն է, որ չի գրուիր:




ցուած է Նաեւ իբրեւ «հովանոց ծառ» անուանով, կամ Նոյնիսկ բաղդատուած՝ թռչող սկաւառակի մէջ: Վիշապածառն ին տերեւները կը հաւաքեն անձրեւներուն եւ մշուշներու, իսկ ծառը հողը կը սնուցանէ ուրիշ բոյսերու համար, ինչպէս՝ անապատի վարդենին, կամ «շիշ ծառը»: Ան կ'արտադրէ Նաեւ կարմիր խեժ մը, գոր կ'անուանեն «վիշապի արիւն»...

Ան կը գործածուի իբրեւ դեղ՝ դարմանելու համար վերքեր եւ տաքութիւն, ինչպէս Նաեւ՝ իբրեւ ներկ:

Այս վիշապածառը կղզիին հրաշալիքներէն մէկն է, եւ ան կը հմայէ զբօսաշրջիկները, որոնց թիւը կը հասնի տարեկան 5000-ի: Սակայն դժբախտաբար կղզիին վրայ կը տիրապետեն կլիմայական փոփոխութեան սպառնալիքը եւ մասնաւորաբար մոլորակին ջերմաս-

ԳԻՏԵԻՐ, ԹԵ...



- Սահարայի անապատին միայն մէկ քառորդը աւազու է: Այս հսկայական անապատին մեծ մասը ծածկուած է խիճերով, սակայն ան ունի Նաեւ իրեն յատուկ լեռնաշղթաները եւ ովասիսները:


Սակայն, անշուշտ, ան աշխարհի ամենէն ընդարձակ անապատը չէ, որովհետեւ...

- Անթարքթիքան է աշխարհի ամենէն ընդարձակ անապատը: Անթարքթիքայի բեւեռային անապատը կը ծածկէ ամբողջ Անթարքթիքայի ցամաքամասը, այսինքն՝ աւելի քան 14 միլիոն քառակուսի քմ:

- Վերջապէս, Նոր Զելանտայի կղզին մաս կը կազմէ շատ աւելի մեծ ցամաքամասի մը, որուն մեծ մասը ջուրերուն տակը ընկղմած է: Նոր Զելանտայի տարածքը մարդոց կողմէ «գտնուեցաւ», երբ վերջապէս անոնք կարողութիւնը ունեցան անջրպետ երթալու եւ կրցան զայն տեսնել այդ բարձունքներէն: Կարգ մը գիտնականներ Նոյնիսկ կը հաստատեն, որ ան պաշտօնապէս պէտք է ճանչցուի իբրեւ երկրագունդի 8-րդ ցամաքամասը:

ՄԱՍԾԵՆԸ

ՆԵՐԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



Փոքրիկ թաղամասի մը բնակիչները կ'ուզեն իրենց տունները ներկել տալ: Անոնք դիմեցին ներկարարի մը, որպէսզի ան կատարէ բոլոր աշխատանքները:

Հետեւեւորվ վարի տեղեկութիւններուն՝ փորձէ հասկնալ, թէ իւրաքանչիւր տուն ի՞նչ գոյնով պիտի ներկուի եւ որքա՞ն ներկի պիտի կարօտի:

1.- Փայտով տան համար պէտք կայ երկու անգամ աւելի ներկի, քան՝ բարձր պատուհան ունեցող տան համար, առաւել՝ պզտիկ թուփերով շրջապատուած տան համար գործածուելիք ներկի տուփերը:

2.- Զարեքով տան համար պիտի գործածուի երկու անգամ աւելի ներկ, քան՝ թուփերով տան ներկը:


3.- Թուփերով տունը ներկելու համար ներկարարը պէտք պիտի ունենայ 3 տուփ ներկի:

4.- Ցանկապատով տան ծախսը երեք անգամ աւելի պիտի ըլլայ, քան՝ քարով շինուած տան ծախսը:


5.- Կլոր պատուհանով տան համար հարկ կայ թուփերով տան գործածուելիք ներկի եւ քարերով տան գործածուելիք ներկի քանակը:

Պատրաստեց՝ ՀՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԺԱՄԱՆՑ



Իրարու միացուր զոյգ թիւերը՝ յայտնաբերելու համար պահուած պատկերը:



Կրնա՞ս գտնել 2 պատկերներուն միջեւ գոյու-թիւն ունեցող 7 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել կարկանդակին հասցնող ճամբան:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած առարկաները:

ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՀԱՐԸ ՅԱՐԹԵՅ ԵՒ ՀԱՍԱՒ ՖԱՅՆԸԼ 4

Երեկ յետմիջօրեին ՀԱՐԸ-ի պասքեթպոլի տողոց խումբը 90-77 արդիւնքով պարտութեան մատնեց Անթունիէն եւ 4-րդ դիրքը գրաւելով շահեցաւ կիսաարտականի իր տումար՝ Լիբանանի պասքեթպոլի ախոյեանութեան (1994-էն ետք) 6-րդ անգամ ըլլալով:

Մրցումը շատ տաք մրցանոյրտի մէջ ընթացաւ. շատ վտանգաւոր էր դաշտի մակերեսը, ուր տաքութեան պատճառով սահելու վտանգ կար, մասնաւորապէս իր մարզիկները բնականաբար կը քրտնէին:

Մրցումին լաւագոյն մարզիկն էր Թայլըր Պէյ, որ 25 կէտ եւ 20 ռիպաւնտ ձեռք ձգեց, մինչ բոլոր տղաքն ալ իրենց կարելին տուին: Ծորտըն 18 կէտ, 8 ռիպաւնտ եւ 3 պլոք կատարեց, Կապրիէլ Աճէմեան (17 կէտ եւ 7 Եսիսթ), Պասել Հարֆուշ (16 կէտ եւ 4 յաջող 3 կէտոց կողովներ), Տուէյն Ճէքսըն (7 կէտ եւ 11 ռիպաւնտ) եւ Գեորգ Գեորգ (7 կէտ) մէկ մարդու պէս պայքարեցան եւ խմբային խաղով տիրապետեցին մրցակիցին վրայ, որ միայն 2 կէտով կրցաւ պահ մը հեռաւալ ՀԱՐԸ-էն: ՀԱՐԸ 14 կէտի ալ հասցուց առաւելութիւնը, բայց ամենէն կարեւորը յաղթանակէն էր եւ համակիրներուն օգնութեամբ յաղթանակին տիրանալը:

Կիսաարտականին ՀԱՐԸ պիտի մրցի ախոյեան Ռիատիի դէմ, որմէ



շատ հաւանական է, որ բացակային Ուալէ Արաքժի եւ Ամիր Սեւուտ, որոնք վիրաւոր են:

Չորեքշաբթի օր տեղի կ'ունենայ այս բնական տարեշրջանի վերջին մրցումը՝ Ղազիրի մէջ, ուր Սաժես պիտի հիւրընկալէ Ռիատին:

Նշենք, որ 11-րդ դիրքի մրցումին, Է. Է. Է. 113-94 արդիւնքով յաղթած էր Մէյրուպային, որ փոխադրուեցաւ Բ. դասակարգ:

Հուլիս գրաւած էր 9-րդ դիրքը՝ փորկուելով փէյ օֆի մրցումէն, յաղթելէ ետք Թատամոն Հարաժէլին (79-55):

Չտումի վերջին մրցումին, Է. Է. Է. որ բնական տարեշրջանին վերջին դիրքը գրաւած էր, «փրկուեցաւ» վտանգէն, երբ 85-71 արդիւնքով յաղթեց Թատամոն Հարաժէլին: 11-րդ դիրքը գրաւող Թատամոն Հարաժէլ Բ. դասակարգի փոխախոյեանին դէմ գտումի մրցում պիտի կատարէ, որմէ ետք արժանի խումբը կ'ա՛մ կը մնայ առաջին դասակարգ, կ'ա՛մ կը բարձրանայ առաջին դասակարգ:

ՖԻՖԱ ԱԿՈՒՄԲԵՐՈՒ ՄՈՆՏԻԱԿ

ԱՅՍՈՐ ԿԸ ՍԿՍԻ ՖԻՖԱ-Ի ԱԿՈՒՄԲԵՐՈՒ ՄՈՆՏԻԱԿԸ

Այս գիշեր Միացեալ Նահանգներու մէջ կը սկսի ՖԻՖԱ-ի ակումբներու մոնտիալը:

21-րդ պաշտօնական մոնտիալին կը մասնակցին 32 խումբեր առաջին անգամ ըլլալով, անոր կը մասնակցին վերջին 5 տարիներուն լաւագոյն արդիւնքներ արձանագրած խումբերը: 2000-ին սկսայ այս մրցաշարքը 6-էն 8 խումբերու մասնակցութեամբ տեղի կ'ունենար, ուր կը մասնակցէին ցամաքամասերու ախոյեանները եւ հիւրընկալ երկրէն ակումբ մը, որոնք ընդհանրապէս եւրոպական խումբեր են, որոնք կը շահէին 2013-էն ի վեր:

Առաջին բացման մրցումին Լիբանանի ժամանակացոյցով ժամը 3:00-ին (առաւօտեան) Եգիպտոսի Ահլին պիտի մրցի Լիոնել Մեսսիի Ինթեր Մայեմիին դէմ:

Մրցումը տեղի կ'ունենայ Մայեմիի «Հարտ Ռոք» դաշտին վրայ: Վաղը ժամը 19:00-ին Պայերն Միւնխէն Օհայոյի



մէջ պիտի մրցի Նոր Չելսնտայի Օքլենտ Սիթի խումբին դէմ, Գ. խմբակի գծով: Այս խմբակին մաս կը կազմեն նաեւ Պոքա ժուլիորգ եւ Պենֆիլդ:

Ինթեր Մայեմի մաս կը կազմէ Ա. խմբակին, Փորթոյի եւ Փալմէյրասի կողքին:

Գիշերուան ժամը 22:00-ին, հետաքրքրական մրցումի մը Փարիզ Սեն ժերմեն պիտի մրցի Աթլետիկո Մատրիտի դէմ, Փասատենայի «Ռոզ Պոլ»-ի դաշտին վրայ:

«Չեմփիընզ լիկ»-ի տիտղոսակիր Փարիզ Սեն ժերմեն մաս կը կազմէ Բ. խմբակին, Պոթաֆոկոյի եւ Սիթըըլ Սաունտըրզի կողքին:

ՃՈՐՄԻՒԼԱ 1

ՎԱՐԸ՝ ԶԱՆԱՏԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ



Վաղը ժամը 21:00-ին «Ժիլ Վիլնետ» շրջավազին վրայ տեղի պիտի ունենայ այս տարուան 10-րդ կրան փրին:

Զանադայի մէջ ամենէն շատ կրան փրինները շահած է Միքայէլ Շումախըր եւ Լուիս Համիլթըն (7 անգամ):

«Ժիլ Վիլնետ» շրջավազը կը նկատուի հետաքրքրական՝ նկատի ունենալով, որ ինքնաշարժներ իրար ջանի մը անգամ կրնան անցնիլ, եւ արկածներու ալ բարձր համեմատութիւն կայ: Զանի մը դանդաղ դարձումներ կան եւ երկար արագ ճամբաներ:

Վերջին երեք տարիներուն աշխար-

իի ախոյեան Մաքս Վերշթափըն կըրցած է շահիլ այս կրան փրին, սակայն այս տարի Օսքար Փիասթրի-Լանտո Նորիս գոյգը իր յաջող «Մաքլարեն»-ով կրնայ առաջին եւ երկրորդ դիրքը գրաւել:

Փիասթրի 186 կէտով կը գրաւէ առաջին դիրքը՝ շահելէ ետք այս տարուան 9 կրան փրիններէն 5-ս, մինչ Նորիս 10 կէտով ետ կը մնայ իր խմբակիցէն: 49 կէտով ետ կը մնայ (Փիասթրիէն) Վերշթափըն, որ վերջին մրցումին 5-րդ դիրքէն 10-րդ դիրքը փոխանցուած էր 10 երկվայրկեան տուգանքէն ետք:

ԼԻԲԱՆԱՆԻ ՌԵԼԻՆԵՐՈՒ Բ. ՄՐՅՈՒՄ

ԱՅՍՈՐ ԵՒ ՎԱՐԸ՝ ԺԵՉԶԻՆԻ 12-ՐԴ ՌԵԼԻՆ

Ա. ԹԵ. ՍԵ. ԷԼ-ի կազմակերպութեամբ այսօր եւ վաղը տեղի կ'ունենայ Լիբանանի ռելիներու ախոյեանութեան Բ. մրցումը՝ Ժեզզինի մէջ:

Ժեզզինի 12-րդ ռելին կ'երկարի 237,02 քիլոմէթրի վրայ, անկկա 93,18 քմ արագութեան 7 հանգրուաններէ կը կազմուի:

Ռոժէ Ֆըղալի եւ ժոզէֆ Մաթար «Թոյոթա Եարիս Ճի. Ար.»-ով պիտի մասնակցի, մինչ օմանցի Ապտալա Ռուահի եւ Աթա Համմուտ (Յորդանան) «Աքրոտա Ֆապիա Ար. Էս.»-ով կը մասնակցին:

Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԼԵՈՆԱԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՈՐ՝ ՀԱՐԸ ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ - ԱՅԼԻ ՍԱՐՊԱԿ

Լիբանանի ֆութպոլի Դ. դասակարգի լեռնալիբանանի ախոյեանութեան գծով այսօր ժամը 17:00-ին Սին Էլ Ֆիլի դաշտին վրայ ՀԱՐԸ Պուրճ Համուտ Բ. հանգրուանի իր երկրորդ մրցումը պիտի կատարէ Ահլի Սարպայի դէմ:

Իր առաջին մրցումին, ՀԱՐԸ Պուրճ Համուտ 2-0 արդիւնքով կրցած էր յաղթել Շապապ Պըրժին եւ այսօր երկրորդ յաղթանակով ինքզինք պիտի ամրապնդէ առաջին դիրքին վրայ:

Մրցակից Ահլի Սարպա ճերմակ հաւասարութիւն մը արձանագրած էր Ռապիթաթ Ուարտանիէ խումբին հետ:

Համակիրներէն կը սպասուի ներկայ ըլլալ դաշտ՝ քաջալերելու համար տղաքը, ժամը 16:00-էն փոխադրակառքեր տրամադրուած են գանոնք փոխադրելու դաշտ, Պուրճ Համուտի քաղաքապետարանի հրապարակէն:



Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԵՅՐՈՒԹԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՅՍՈՐ՝ ՀԱՐԸ - ՆՕ ԼԻՄԻԹՅ

Լիբանանի ֆութպոլի Դ. դասակարգի Պէյրութի շրջանի ախոյեանութեան 6-րդ հանգրուանին գծով այսօր ժամը 14:00-ին Անարի դաշտին վրայ ՀԱՐԸ-ի ներկայացուցչական խումբը պիտի մրցի Նօ Լիմիթը խումբին դէմ:

Ատիայի տօնին առիթով 1 շաբթուան դադարէն ետք ՀԱՐԸ ամէն գնով պիտի փորձէ յաղթել՝ ձեռք ձգելով 12-րդ կէտը, հասնելու համար առնուազն Բ. դիրքին:

Առաջին դիրքը գրաւող Աթլետիկո Սանհարիպի հետ 13-ական կէտեր ունի, մինչ ՀԱՐԸ եւ Տիւնիս Պէյրութ 9-ական կէտեր ունին:

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԵՆ

●ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆութպոլի ազգային խումբի պաշտպան եւ Լոքոմոթիւ Մոսկուայի մարզիկ Նայիր Թիկնիզեան համաձայնութեան եկաւ Սերպիոյ կարմիր աստղ Պէլկրատի հետ: Ըստ «Արմենփրես»-ի,



Թիկնիզեան Պէլկրատ պիտի մեկնի 21 յունիսին բժշկական քննութեան ենթարկուելու, ապա պայմանագրութիւն ստորագրելու համար սերպական ակումբին հետ:

●ՄԱՆԶԵՍՏԸՐ Եունայթըտ ըստ երեւոյթին ձեռք պիտի բերէ շուէտացի յառաջապահ Վիքթոր Եոքե-րեշը: Եոքերեշ Սփորթինկ Լիգային հետ աներեւակա-



յելի երկու եղանակներ բոլորեց՝ նշանակելով 63 կոլ եւ 10 Եսիսթ, բայց վերջերս հարցեր ունեցած էր իր ակումբին հետ, որ պայմանագրութեան խզումի գին որոշած էր 65 միլիոն եւրօ, բայց վերջերս, երբ Եունայթըտի կողքին Արսենալ եւ Եոլվէնթուս հետաքրքրուած էին շուէտացի յառաջապահին ծառայութիւններով, Սփորթինկ պահանջած էր գրեթէ 80 միլիոն եւրօ:

●ՄԻԻՍ Կողմէ, փորթուգալի մարզիկ Ռաֆայէլ Լէաօ փափաք յայտնած էր լքել իր իտալական Ա. ՍԵ. Միլան ակումբը՝ միանալու համար Պայերն Միւնխ-

իխին, որ կ'ուզէ 25 տարեկան Լէաօն ձեռք ձգել՝ փոխարինելու Լիորի Սանէն, որ շատ հաւանաբար պիտի միանայ Թուրքիոյ Կալաթասարային: Պայերն հետաքրքրուած էր նաեւ սպանացի Նիքօ Ուլիվասի ծառայութիւններով: Զախոդութեան պարագային Պայերն պիտի փորձէ Լէաօն ձեռք ձգել:

●ԱՆԳԼԻՈՅ՝ ախոյեան Լիվըրփուլ կ'ուզէ ձեռք ձգել Փարիզ Սեն ժերմենի մարզիկ Պրատիլ Պարքուան: Լիվըրփուլ, որ պատրաստ է 150 միլիոն եւրօ վճարելու ձեռք ձգելու համար գերմանացի յարձակող միջնապահ Ֆլորիան Վիքթըր Պայեր Լէւտքուլընէն, կ'ուզէ ձեռք ձգել նաեւ Պարքուան, որ լաւ եղանակ մը ունեցած էր փարիզեան ակումբին հետ, բայց վերջերս իր դիրքը կորսնցուցած էր հիմնական կազմին հետ:

●ԵՈՒՆԱՅԻՐՏԻ յառաջապահ Մարքուս Ռաշֆորտ իր գործավարին յայտնած էր, թէ միայն կ'ուզէ միանալ Պարսելթոնային, մանաւանդ որ անոր ժամանակաւոր միանալու ժամկետը՝ Ասթօն Վիլայի հետ կ'աւարտի, եւ ան չ'ուզէր վերադառնալ Մանչեսթըր Եունայթըտ:

●ԻՆԹԵՐ Միլանի տր Նշանակուած մարզիչ Քրիսթիան Հիւու արդէն իսկ գործի անցած է եւ ձեռք ձգած պրագիլցի Լուիս Յենրիքէն, որ աջ ծայրի յառաջապահ դիրքի վրայ կը խաղայ:

●ՄԱՆԶԵՍՏԸՐ Սիթիի մարզիչ Փեփ Կուարտիլա ձեռք ձգելէ ետք Լիոնի ֆրանսացի միջնապահ Ռալան Զերքին, իր կազմին միացուց նաեւ Ա. ՍԵ. Միլանի Թիլանի Ռէյնտըրգը:

●ՌԵԱԼ Մատրիտ իր տր մարզիչ Զապի Ալոնսոյի հետ ձեռք ձգած էր աջ ծայրի պաշտպան Թրենթ Ալքեսանոր-Անուտը (Լիվըրփուլէն), իր կազմին մէջ առաւ նաեւ արժանիքիցի Ֆրանքօ Մասթանթրունոն, որ կը նկատուի ապագայի աստղ:

●ԶԵԲԸՆ Տը Պրույնէ միացաւ Իտալիոյ ախոյեան Նափոլիին, մինչ Ռեալի միջնապահ Լուիս Մոտրիչ միացաւ Ա. ՍԵ. Միլանին, բայց պաշտօնապէս պիտի միանայ ակումբներու մոնտիալէն ետք՝ 1 տարուան համար:

ՀԱՐԸ-Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՐ

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

ԿԱԼԱ-ԸՆԹՐԻՔ

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2025-ԻՆ

